ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 1
20.09.2022թ. կնքված N ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2022/20Հ պետական գնման պայմանագրի

ք. Երևան « 17 » « 12 » **2022թ.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ա. Երիցյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մոդուլ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Հակոբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով Կողմերի միջև 20.09.2022թ. կնքված N**ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2022/20Հ** պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը և ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 1-ի N 1864-Ն որոշումը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին՝

1.1 2022 թվականին իրականացվելիք ծառայությունների գինը նվազեցնել **3 889 979** (երեք միլիոն ութ հարյուր ութսունինը հազար ինը հարյուր յոթանասունինը) ՀՀ դրամով՝ **14 160 559** (տասնչորս միլիոն մեկ հարյուր վաթսուն հազար հինգ հարյուր հիսունինը) ՀՀ դրամի փոխարեն սահմանելով **10 270 580** (տաս միլիոն երկու հարյուր յոթանասուն հազար հինգ հարյուր ութսուն) ՀՀ դրամ: Պայմանագրի 4-րդ կետի 4.1 ենթակետի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությանբ հետևյալ բովանդակությամբ՝

«Պայմանագրով մատուցման ենթակա ծառայության գինը 2022թ.համար կազմում է **10 270 580** (տաս միլիոն երկու հարյուր յոթանասուն հազար հինգ հարյուր ութսուն) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:»:

1.2 Հաստատել Համաձայնագրի 2022թ նոր Վճարման ժամանակացույցը համաձայն՝ Հավելված 1-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
ՀՀ տարածքային կառավարման և	«Մոդուլ» ՍՊԸ
ենթակառուցվածքների նախարարություն	ՀՀ ք. Երևան, Ն. Զարյան 22, տարածք 3
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Կոմիտաս մ/ճ
ՀՀ կենտրոնական գանձապետարան	ՀՀ 11500404281400
ՀՀ 900011002632	ՀՎՀՀ 05020542
ՀՎՀՀ 02815457	տնօրեն
գլխավոր քարտուղար	Ն. Հակոբյան
Ա. Երիցյան	
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հաստատված է
N ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-2022/20Հ գնման պայմանագրի
« 17 » « 12 » 2022թ. կնքված
Թիվ 1 Համաձայնագրով
Հավելված թիվ 1

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Որոտան-Խոտ ավտոճանապարհի վերակառուցման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության (2022թ. իրականացվելիք)

(ՀՀ դրամ)

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Գնման ենթակա աշխատանքների անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
1	98111140/58	Հեղինակային հսկողության ծառայություններ	---	---	---	---	---	---	---	---	10 270 580	10 270 580	10 270 580	10 270 580	**10 270 580**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011002632
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղար
Ա. Երիցյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Մոդուլ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Ն. Զարյան 22, տարածք 3
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Կոմիտաս մ/ճ
ՀՀ 11500404281400
ՀՎՀՀ 05020542
տնօրեն
Ն. Հակոբյան

(ստորագրություն)
Կ.Տ.